# 509 Տե՛ր, ինչպես Պենտեկոստեին

1. Տե՛ր, ինչպես Պենտեկոստեին
Զորությունդ ցուցուցիր
Մաքրող կրակով այն երկնային,
Դարձյալ մեր վրա իջի՛ր:

Տե՛ր, մեզ ղրկե զորությունդ՝
Պենտեկոստեի զորությունդ,
Օրհնության հեղեղներ
Թող տեղան մեր վրա:
Տե՛ր, մեզ ղրկե զորությունդ՝
Պենտեկոստեի զորությունդ,
Մեղավորք թող Քեզ դառնան
Եվ անվանդ ալ փառք տան:

2. Քեզի համար սուրբ գործերու
Մեր սրտերն պատրաստե:
Եկո՛ւր, մեզ լիովին գրավե՛ Դու
Եվ մի՛ զատվիր մեզմե:

3. Եսն ու նախանձ և չար կիրքերն
Կրակովդ վառե,
Սուրբ Հոգիովդ լեցուր սիրտերն,
Մեր հավատքն նորոգե:

4. Առջևդ կեցած կսպասենք Քեզ՝
Խոստմանդ հավատալով
Եվ չենք ձգեր, որ թողուս մեզ,
Մինչև օրհնես շնորհիքովդ: